

Ճանաչված բժիշկը ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում

06.08.2013



2013 թվականի օգոստոսի 6-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը հյուրընկալեց ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր միկրովիրաբույժ, Մխիթար Յերացու անվան համալսարանական կենտրոնի պլաստիկ վիրաբուժության ծառայության ղեկավար Արտավազը Սահակյանին: Հանդիպմանը առիթը բժշկի կատարած վերջին հրաշագործություններից մեկն էր, որի արդյունքում լիարժեք կյանք վերադարձավ ՀՀ Վայոց ձորի մարզի Չառիթափի համայնքի բնակիչ 16-ամյա Լիլիթ Աբրահամյանը, որի ոտքը կտրվել էր ավտովթարից հետո: ՀՀ Վայոց ձորի մարզպետը շնորհակալություն հայտնեց բժիշկ Սահակյանին մարզի բնակչուհու և նրանց ընտանիքի կյանքը բնականոն հուն վերադարձնելու համար և ի նշան երախտիքի նրան պարգևատրեց շնորհակալագրով: Հանդիպմանը ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Զարոյանյանը, Չառիթափի համայնքի ղեկավար Խաժակ Դավթյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Խաչիկ Գևորգյանը: